ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իտալական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2017թ. հունիսի 7-ին ք. Հռոմում կայացել է հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը:

Հանձնաժողովի նիստին բացման խոսքով ելույթ ունեցան ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և Իտալիայի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարար Անջելինո Ալֆանոն: Այնուհետև նիստը վարեցին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանը և Իտալիայի արտաքին գործերի և միջազգային համագործակցության պետքարտուղար Բենեդետտո Դելլա Վեդովան:

Հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով Հռոմ գործուղված պատվիրակության կազմում ընդգրկվել են ՀՀ արտաքին գործերի, տնտեսական զարգացման և ներդրումների, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, էներգետիկայի և բնական պաշարների, գյուղատնտեսության, մշակույթի նախարարությունների և ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստին հաջորդեց «Նոր հնարավորություններ, հին ուղիներ. Հայաստանը որպես դարպաս դեպի եվրասիական և իրանական շուկաներ» խորագիրը կրող հայ-իտալական գործարար համաժողովը, որին երկու կողմից մասնակցեցին ավելի քան 250 ընկերություններ:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Նիստի օրակարգում ներառված էին առևտրատնտեսական համագործակցության, սեկտորալ՝ մասնավորապես, տրասպորտի, զբոսաշրջության, գյուղատնտեսության, էներգետիկայի և ենթակառուցվածքների, մշակույթի, կրթության և գիտության, առողջապահության, ապակենտրոնացված համագործակցության, արտակարգ իրավիճակների բնագավառներին առնչվող հարցեր:

Նիստի ընթացքում քննարկվել են երկկողմ առևտրային և ներդրումային հարաբերությունների ներկա մակարդակը և համագործակցության հեռանկարներ:

Կարևորվել է գործարար շրջանակների միջև կապերի ակտիվացումը՝ միտված առևտրատնտեսական կապերի համապատասխանեցմանն առկա քաղաքական հարաբերություններին:

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նիստի արդյունքում կողմերը պայմանավորվեցին օգտագործելով երկու երկրների տնտեսական ողջ ներուժը՝ խորացնել Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև երկկողմ համագործակցությունը տնտեսության համապատասխան ոլորտներում:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի արդյունքում ստորագրվել է Արձանագրություն (կցվում է), որով ըստ ոլորտների սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները և կատարվելիք աշխատանքները:

Ստորագրվել է գործնական ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մշակութային, կրթական և գիտական համագործակցության վերաբերյալ 2017-2020թթ. համար:

Ստորագրվել է տեխնիկական համաձայնություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի և «Իտալական արյան ազգային կենտրոնի» միջև:

Հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի
հայկական կողմի քարտուղար

Գ. Ղալաչյան

13.06.2017